

Ֆրանսայի Կարոլոս 2 թագաւորը՝ (1380*—1422) շրջապատուած դքսերէ ու կոմսերէ, իշխաններէ, պարոններէ ու ասպետներէ, կարդինալներէ ու եպիսկոպոսներէ եւ յ« ալոյց բազմաց աւագաց, որ հեծեալ եւ որ հետեւակ, եւ անթիւ բազմութեամբ ժողովրդեանն », Հայոց գահազուրկ թագաւորն արքայաւլայել պատիւներով ընդունելու համար քաղաքէն դուրս ելլելով՝ ընդառաջ գացած էր Լեւոնի, որ Կարոլոս 2-ի համար Կասախյայի թագաւորէն յանձնարարական թղթեր բերած էր(1)։ Հետաքրքիրներու բազմութիւնն անո՛ր համար խոնուած էր, վասն զի կը զարմանար թէ ինչպէ՛ս կըլլայ որ իրենց թագաւորն ուրիշ հասարակ թագաւոր մը զիմաւորելու համար այստեսակ բարձր պատիւներ կընծայէ. « զի որպէս վկայեն ամենեքին, ո՛չ որ ի թագաւորաց անտի Գաղղիոյ ել երբէք ընդ առաջ թագաւորի միոյ տոսկականի, այլ միայն ընդ առաջ կայսեր, »(2) — անշուշտ Գերմանիոյ կայսեր։

Այսպիսի պատիւներով առաջնորդուեցաւ Լեւոն Լուվրի արքայական պալատը(3), իբրեւ հիւր Կարոլոս 2-ի։

Ժամանակակից պատմիչները միաբերան կը վկայեն, թէ Կարոլոս 2 ի պատիւ Լեւոնի տուած առաջին հացկերոյթի միջոցին, — որուն կը մասնակցէին Ֆրանսայի երեւելիները, ինչպէս թագաւորին եղբայրը՝ Տուրէնի դուքսը, հօրեղբայրները՝ Բուրգոնի եւ Բերրիի դքսերը, մօրեղբայրը՝ Բուրբոնի դուքսը, նոյնպէս եւ պալատական բարձր պաշտօնէութիւնը, — խնդրեց Լեւոնէ պատմել իր ենթարկուած աղէտները. եւ երբ մօտէն ալ տեղեկացաւ անոր քաջած տառապանքներուն ու ցոյց տուած կորովին՝ սաստիկ զգածուելով՝ զբամական մեծաքանակ նուէրներէ զատ տարեկան դումար մը յատկացուցցուց Լեւոնի, ամսէ ամիս կանոնաւոր կերպով վճարելու խոստումով, որպէս զի Հայոց թագաւորն իր զիրքին վայել ճոխութիւնով ու պատիւով ապրի Ֆրանսայի մէջ։ Սէն-Գրնիի վերոյիշեալ անանուն կրօնաւորն իր Ժամանակագիրքին մէջ (հտ. Ա, եր. 327) այս առիթով հետեւեալ խօսքերը կը գնէ Կարոլոսի բերանը. « Ի նպատ Զեզ նախապատրաստուած ըլլալով Ձեր փառաւոր

* Այս բուսականը (1380) Կարոլոսի գահակալութեան բուսականն է. իսկ գրքիս սկիզբները (եր. 8) յիշուածը՝ (1368) ծննդեան բուսականը։

(1) *Chronique du Religieux de Saint-Denis*, քարգլ. Բեյլլագէի, հս. Ա, եր. 325։

(2) Գարդել, եր. 196։

(3) Գրքիս մեջ դրուած պատկերը (եր. 84) կը ներկայացնէ Լուվրի այն ժամանակուան տեսարանը, որ ետէն բոլորովին փոխուած եւ ընդարձակուած է. իսկ հիմա վերածուած է Հնուքեանց Թանգարանի։